ԱՆԱՀԻՏ ԱՐՆԱՈՒԴՅԱՆ ՄԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ 2



I

ՄԱՍ

Անահիտ Արնաուդյան Մարինե Մանուկյան

ՄԱՅՐԵՆԻ



Ի ՄԱՍ

Նկարիչ՝
Նաիրա Ահարոնյան

Էդ

ՀՏԴ 373:811.19(075.3)
ԳՄԴ 81.51գ72
Ա 919

Երաշխավորված է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից

Արնաուդյան Անահիտ, Մանուկյան Մարինե
Ա 919 Մայրենի 2: Դասագիրք 2-րդ դասարանի համար / Ա. Արնաուդյան, Մ. Մանուկյան.- Եր.: Էդիթ Պրինտ, 2023.
Մաս 1.- 80 էջ:

ՀՏԴ 373:811.19(075.3)
ԳՄԴ 81.51գ72

ISBN 978-9939-75-973-9

© Անահիտ Արնաուդյան, Մարինե Մանուկյան, 2023
© ՀՀ ԿԳՄՄՆ, 2023
© Էդիթ Պրինտ, 2023

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Կարդում եմ, խոսում եմ, ուսումնասիրում եմ, դիտարկում եմ, վերլուծում, հասկանում եմ, առաջարկում եմ, ներկայացնում եմ, եզրակացություններ եմ անում, հիմնավորում եմ, ինձ ստուգում և գնահատում եմ...

Գրում եմ, գծում, նկարում եմ, մոդելավորում եմ, վերլուծում եմ, առաջադրանքներ եմ կազմում, մտքերս եմ գրանցում, տվյալներ եմ հավաքում, եզրակացություններ եմ անում, ինձ ստուգում, գնահատում եմ, ներկայացնում եմ...

Խոսում ենք, լսում ենք, մտքեր ենք փոխանակում, կարդում ենք, ուսումնասիրում ենք, դիտարկում ենք, հասկանում ենք, վերլուծում ենք, քննարկում ենք, համեմատում ենք, գաղափարներ ենք փոխանակում, կարծիքներ ենք բարձրաձայնում, քննարկում, հիմնավորում, փաստարկներ ենք բերում, իրար ստուգում ենք, գնահատում ենք, ներկայացնում ենք...

Գրում ենք, գծագրում, նկարում, մոդելավորում ենք, դիտարկումներ և գրանցումներ ենք անում, հասկանում ենք, վերլուծում ենք, առաջադրանքներ ենք կազմում, տվյալներ ենք հավաքում, վերլուծում, եզրակացություններ ենք անում և գրանցում, ստեղծագործում ենք, իրար ստուգում և գնահատում ենք, ներկայացնում ենք...

Փոքր (3–4) կամ մեծ խմբով (ամբողջ դասարանով) աշխատում ենք դասասենյակում կամ դասասենյակից դուրս, կարդում ենք, գրում ենք, պատկերավորում, մոդելավորում ենք, դիտարկումներ և գրանցումներ ենք անում, հասկանում ենք, վերլուծում ենք, առաջադրանքներ ենք կազմում, տվյալներ ենք հավաքում ու վերլուծում, եզրակացություն ենք անում և գրանցում, ստեղծագործում ենք, ներկայացնում ենք, իրար ստուգում և գնահատում ենք...

Բարև՛, ես եմ

Մուտքի խոսք

ԾԻԱԾԱՆ

Երվանդ Պետրոսյան

Փոքրիկ աղջիկն ասաց.
- Բարև:
Փոքրիկ տղան ասաց.
- Բարև:
Եվ օդի մեջ հանդիպեցին
Նոր աչք բացած երկու բարև:
Ու փարվեցին, ուրախացան,
Ու թև թևի վեր բարձրացան,
Ու արևի տակ շիկացան,
Ու ամպի մեջ խոնավացան,
Ու մաղվեցին ցողերի պես,
Փայլփլեցին շողերի պես,
Դարձան շքեղ մի ծիածան:

1. Ինչպե՞ս ծանոթացան աղջիկն ու տղան:
2. Ի՞նչ ես կարծում ըստ բանաստեղծության՝ ծանոթությունը վերածվե՞ց մտերմության:
3. Ինչպե՞ս բարևը դարձավ ծիածան:
4. Տրված պատկերներից որի՞ն հանդիպեցիր բանաստեղծության մեջ:

5. Ասա՛, այդ պատկերներից որոնք կարող են լինել ծիածանի «բարեկամները»:
6. Քննարկե՛ք.

- ի՞նչ է բարևը,
- ի՞նչ եք կարծում ինչպիսի՞ ն է այն,
- ի՞նչ բնավորություն ունի,
- ինչե՞ր կարող է անել,
- պաստառ պատրաստե՛ք և ներկայացրե՛ք ***բարևին***:

7. Գրի՛ր ***արև***, ***բարև***, ***թև*** բառերը:

   Համեմատի՛ր այդ բառերի գրությունը ***անձրև*** և ***փերև*** բառերի գրության հետ:
8. Հաշվի՛ր և գրի՛ր ***արև***, ***բարև***, ***թև, անձրև, փերև*** բառերի հնչյունների և տառերի քանակը:
9. Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր նոր սովորած բառերը:

10. Օգտվելով նկարներից՝ ***ողջույն***, ***բարի լույս***, ***բարի օր***, ***բարի երեկո*** արտահայտություններն օգտագործե՛ք երկխոսությունների մեջ և ներկայացրե՛ք:

- Բացատրե՛ք, թե երբ և ինչու օգտագործեցիք այդ արտահայտությունները:
- Խոսե՛ք նաև ***բարի գիշեր*** արտահայտության մասին:

11. Գրի՛ր ***հրաժեշտի*** բառեր և արտահայտություններ:

12. Անվանեք ծիածանի գույները ճիշտ հերթականությամբ:

13. Ներկապնակի վրա խառնեք նշված գույների ներկերը, ապա անվանեք ստացած նոր գույները:



14. Կազմակերպեք ծիածանի ծննդյան տոնը.

- ծիածանի համար շնորհավորական բացիկ պատրաստեք,
- շնորհավորանքի խոսքեր և մաղթանքներ գրեք,
- ծիածանի բարեկամների համար հրավիրատոմսեր պատրաստեք,
- պաստառի վրա նկարեք և ներկայացրեք ծննդյան տորթը:



ՄԻ ՕՐՈՎ ԷԼ ՄԵԾԱՑԱ

Պարվական Խաչատրյան

Երկինքն ասաց՝ արև կտամ,
Ու տվեց,
Արևն ասաց՝ բարև կտամ,
Ու տվեց,
Ծաղիկն ասաց՝ քեզ բույր կտամ,
Ու տվեց,
Հովիկն ասաց՝ համբույր կտամ,
Ու տվեց,
Դպրոցն ասաց՝ քեզ լույս կտամ,
Ու տվեց,
Լույսը ասաց՝ քեզ հույս կտամ,
Ու տվեց...
Այսպես մի քիչ բոյ քաշեցի,
Բարձրացա,
Եվ աշխարհում մի օրով էլ
Մեծացա:

հույս
կտամ

համբույր

բոյ քաշել

աշխարհ

1. Ըստ բանաստեղծության՝ ներկայացրո՛ւ, թե ինչ խոստումներ էին տալիս ***երկինքը***, ***արևը***, ***ծաղիկն*** ու ***հովիկը***:

2. Ըստ քեզ՝ ինչպե՞ս են ***դպրոցն*** ու ***լույսը*** օգնում տղային մեծանալ:

3. Ովքե՞ր են քեզ օգնում առողջ մեծանալ:

4. Ըստ բանաստեղծության՝ բառերի զույգեր կազմի՛ր և շարունակի՛ր.

երկինք - արև, արև -բարև, ...

5. Տրված բառերի շարքից դո՛ւրս գրիր հնչողությամբ նման զույգերը.

ծաղիկ, արև, հովիկ, դպրոց, հույս, բարև, լույս, փողոց:

6. Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր այն բառերը, որոնց հնչյունների և տառերի քանակը տարբեր է:

7. Օգտվելով նկարներից՝ լրացրո՛ւ բառերը.

բողբոջ, ծաղիկ, պտուղ, ***աղջիկ, ..., մայրիկ***

..., ճուտ, ..., ***..., զինվոր, ...***



8. Դիտե՛ք նկարները և գուշակե՛ք, թե քանի տարեկան է պատկերված անձանցից յուրաքանչյուրը:

9. Անվանե՛ք պատկերված առարկաներն ու երևույթները:



10. Օգտվելով նկարներից՝ բառերի զույգեր կազմե՛ք և օգտագործե՛ք դրանք նախադասությունների մեջ:

11. Դասարանում սենյակային բույսեր աճեցնելու պլան մշակե՛ք և ներկայացրե՛ք.

- հավաքե՛ք տեղեկություններ ձեր ընտրած բույսի մասին,
- որոշե՛ք, թե ինչ խնամք է անհրաժեշտ, որ այն լինի առողջ ու փարթամ,
- պատրաստե՛ք զեկույց, թե ինչ նշանակություն ունեն բույսերը մարդկանց ու կենդանիների կյանքում:

Խնկո-Ապեր

ԵՍ

Ագռավը բռնեց մի խեցգետին և նստեց ծառին: Խեցգետինն ուզեց ազատվել ու ասաց.

- Ոսկեհատի՛կ ագռավ տատիկ, ո՞վ է մեզնից կեղտոտը:

Ագռավը սեղմեց կտուցը և կռռաց.

- Դռ՛ւ ...

- Ոսկեհատի՛կ ագռավ տատիկ, ո՞վ է մեզնից նախշունը:

- Ագռավը բացեց կտուցը և ասաց.

- Ե՛ս...

Կտուցը բաց անելուն պես խեցգետինն ընկավ ջուրը և ազատվեց:

Խնկո-Ապեր
ԱՌԱԿՆԵՐ

ոսկեհատիկ

նախշուն

կեղտոտ

ագռավ

1. Բացատրի՛ր, թե նշված բառերից որն է բնութագրում ագռավին.

   հնարամիտ, պարծենկոտ, ինքնահավան, ճարպիկ:

2. Խեցգետնին ի՞նչ բառերով կներկայացնես:
3. Փոխի՛ր հերոսների երկխոսությունն այնպես, որ ագռավը կրկին կտուցը բացի, ու խեցգետինն ազատվի նրանից:
4. Պատմի՛ր մի դեպք, երբ հնարամտության շնորհիվ դժվար իրավիճակից կարողացել ես դուրս գալ:
5. Արտասանի՛ր հնչյուններ, որոնց արտաբերման ժամանակ շրթունքներն իրար են հպվում:
6. Արտասանի՛ր հնչյուններ, որոնց արտաբերման ժամանակ լեզվի ծայրը մոտենում կամ հպվում է ատամնաշարին:

7. Լրացրո՛ւ համապատասխան բառերը:

   Ագռավը ... է:

   Խեցգետինը ... է:

8. Խմբավորի՛ր բառ-նկարները՝ ըստ թռչունների և միջատների և գրի՛ր բառաշարքերը:

9. Յուրաքանչյուր կենդանուն բնութագրող բառ ընտրեք հետևյալ շարքից, քննարկեք, ներկայացրեք ձեր ընտրությունը.

խելացի, խորամանկ, հավատարիմ, արագավազ, սրատես, ժրաջան, իմաստուն, դանդաղաշարժ:

10. Պատրաստեք և ներկայացրեք զեկույց որևէ կենդանու մասին.

- անվանեք և նկարագրեք ձեր ընտրած կենդանուն,
- որտեղ է ապրում,
- ինչո՞վ է սնվում,
- ինչպե՞ս է մեծացնում իր ձագերին,
- ի՞նչ գիտեք նրա բնավորության մասին:

Հեքիաթներ կենդանիների մասին

ՇԱԲԱԹՎԱ ԻՄ ՅՈԹ ՕՐԵՐԸ

Ահմադռեզա Ահմադի

Թարգմանությունը պարսկերենից՝

Գևորգ Ասատրյանի

Կիրակի է: Ես մի թերթիկ եմ պոկում իմ աշխատանքային տետրից: Եվ ձեռքս եմ առնում ջրաներկիս տուփը: Ջրաներկս յոթ գույն ունի՝ մոխրագույն, կանաչ, կապույտ, դեղին, կարմիր, սև և սպիտակ: Իմն են նաև շաբաթվա յոթ օրերը՝ երկուշաբթին, երեքշաբթին, չորեքշաբթին, հինգշաբթին, ուրբաթը, շաբաթը և կիրակին: Ուզում եմ շաբաթվա իմ յոթ օրերին իմ յոթ գույնի ներկերով մի նկար նկարել իմ աշխատանքային տետրից պոկած թերթիկի վրա:

Երկուշաբթի: Աշխատանքային տետրից պոկած թերթիկի վրա կանաչ գույնով մի կանաչ թռչուն եմ նկարում:

Երեքշաբթի: Աշխատանքային տետրից պոկած թերթիկի վրա մոխրագույն մի վանդակ եմ նկարում թռչնի համար:

Չորեքշաբթի: Աշխատանքային տետրից պոկած թերթիկի վրա դեղին գույնով ոսկեդեղին կորեկ եմ նկարում թռչնի համար:

Հինգշաբթի: Աշխատանքային տետրից պոկած թերթիկի վրա կապույտ գույնով ջրաման եմ նկարում թռչնի համար:



Ուրբաթ: Աշխատանքային տետրից պոկած թերթիկի վրա կարմիր գույնով մի ալ կարմիր վարդ եմ նկարում թռչնի համար:

Շաբաթ: Աշխատանքային տետրից պոկած թերթիկի վրա սև գույնով մի սև կողպեք եմ նկարում

թռչնի վանդակի համար:

Կիրակի: Հայրիկս այսօր հեռավոր ճամփորդությունից տուն է գալու:

Ուզում եմ աշխատանքային տետրից պոկած թերթիկի վրա սպիտակ գույնով սպիտակափայլ մի բանալի նկարել մոխրագույն վանդակի սև կողպեքի համար:

Անձրևոտ օր է: Բակ եմ վազում՝ հայրիկիս դիմավորելու: Հայրիկս ասաց, որ շատ է ուզում իմ նկարածը տեսնել: Բայց նկարը պատշգամբում էր մնացել՝ անձրևի տակ: Անձրևը ջնջել տարել էր թռչնի մոխրագույն վանդակն ու սև կողպեքը. աշխատանքային տետրից պոկած թերթիկի վրա մնացել էին կանաչ թռչունը, կարմիր վարդը, ոսկեդեղին կորեկները և անձրևաջրով լցված կապույտ-կապույտ ջրամանը:



1. Ի՞նչ որոշում կայացրեց տղան:
2. Ներկայացրո՛ւ տղայի պլանավորած քայլերը:
3. Ինչպե՞ս փոխվեց նկարը անձրևի տակ մնալուց հետո:
4. Բացատրի՛ր, թե ինչ միտք է թաքնված պատմության «Անձրևը ջնջել տարել էր թռչնի մոխրագույն վանդակն ու սև կողպեքը...» հատվածում:

5. Ճիշտ հերթականությամբ գրի՛ր շաբաթվա օրերը:
6. Տեքստից դու՛րս գրիր ձայնավորով և բաղաձայնով սկսվող երեքական բառ:
7. Պատմվածքից արտագրի՛ր քեզ դուր եկած հատվածը և նկարազարդի՛ր:

8. Քննարկե՛ք և ներկայացրե՛ք.
   - որո՞նք են շաբաթվա աշխատանքային օրերը,
   - որո՞նք են հանգստյան օրերը,
   - ինչպե՞ս եք անցկացնում հանգստյան օրերը:
9. Մեկնաբանե՛ք՝ **«ծույլի համար ամեն օրը կիրակի է»** արտահայտությունը:

10. Համեմատե՛ք շաբաթվա յոթ օրերը ծիածանի յոթ գույների հետ:
11. Շաբաթվա օրերի համար նոր անուններ հորինե՛ք և ներկայացրե՛ք համապատասխան բացատրություններով.
    - ըստ ձեր ընտրած անունների՝ ներկայացրե՛ք յուրաքանչյուր օրվա ձեր անելիքները,
    - պաստառի վրա նկարե՛ք և ներկայացրե՛ք ձեր պլանավորածը:

12. Քննարկեք և ներկայացրեք, թե ինչպիսին է Սոնայի առօրյան:

Հեքիաթներ մեր հիգիենայի մասին

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԵՑԵՔԸ, ԽՆԴՐԵՄԸ

Դոնալդ Բիսեթ

Մի անգամ Խնդրեմը և Շնորհակալությունը հանդիպեցին, և ամեն մեկն սկսեց դժգոհել իր բախտից:

– Ոչ մեկը մեզ չի գնահատում և չի հարգում:

Այդ ժամանակ նրանց է միանում Ներեցեքը:

- Ներեցեք, որտեղ է արդարությունը, մյուս բոլոր բառերը հանգիստ ապրում են, իսկ մենք անդադար աշխատում ենք: Մեզ միշտ հիշում են, անընդհատ՝ շնորհակալություն, խնդրեմ, ներեցեք, չեն թողնում նույնիսկ հանգիստ քնենք:

– Շնորհակալություն, բայց արդարություն չկա,- համաձայնեց Շնորհակալությունը,- մեծերը միշտ ասում են՝ ասա շնորհակալություն, ինչո՞ւ...

– Խնդրեմ,- հոգոց հանեց Խնդրեմը,- ինձ էլ հանգիստ չեն տալիս. ավտոբուսում, փողոցում միայն լսում ես՝ «փոխանցեք խնդրում եմ», «մեկ տոմս, խնդրում եմ»: Ու բոլորը պատասխանում են՝ խնդրեմ, խնդրեմ, խնդրեմ... Իհարկե, ես հասկանում եմ, դա քաղաքավարություն է, բայց ուժերս բոլորովին կորցրել եմ:



Խնդրեմը խոսելով հետ-հետ գնաց, որ նստի, բայց պատահմամբ տրորեց Շնորհակալության ոտքը:

– Օ՜հ, ների՛ր ինձ:

– Ահա, դո՛ւ էլ,- բարկացավ Ներեցեքը,- չե՞ս կարող առանց ինձ:

– Ների՛ր, ես պարտավոր էի ներողություն խնդրել:

– Նորի՞ց, չէ՛, պետք է մի բան անել: Եկեք մի շաբաթով գնանք հանգստանալու: Կլողանք, կխաղանք, և ոչ մի աշխատանք չենք անի: Թող մի շաբաթ մարդիկ առանց մեզ դիմանան:

Այդպես էլ արեցին: Իսկ երբ վերադարձան, նույնիսկ ուրախացան, լսելով՝ ինչպես են բոլորը, այնուամենայնիվ, հասկանալով և տեղին օգտագործում այդ բառերը:

1. Ինչի՞ց էին դժգոհում հերոսները:
2. Ի՞նչ որոշում կայացրին նրանք:
3. Կարդա՛ այն հատվածը, որտեղ հերոսները բողոքում են անարդարությունից:
4. Բացատրի՛ր ***դ***-ի արտասանությունը հետևյալ բառերում.

   արդարություն, անընդհատ, անդադար, խնդրել:

✸ Համեմատի՛ր ***դանդաղ, վանդակ, դատարկ, վերադառնալ*** բառերի արտասանության հետ:

5. Քննարկե՛ք.

- ինչ կլիներ, եթե մարդիկ երբեք չօգտագործեին ***շնորհակալություն***, ***ներեցեք***, ***խնդրեմ*** բառերը,
- ուրիշ ինչ բառեր, արտահայտություններ գիտեք, որ կարող են փոխարինել այս բառերին,
- այդ փոխարինող բառերով երկխոսություններ կազմե՛ք և ներկայացրե՛ք:

Հուշում՝ ***շնորհակալ եմ, կներեք, չարժե:***

6. Ըստ նկարների՝ երբ կօգտագործեք ***խնդրում եմ***, իսկ երբ՝ ***խնդրեմ*** արտահայտությունները: Ինչո՞ւ:

7. Ընտրե՛ք նկարներից մեկը և գրի՛ առեք հերոսների երկխոսությունը:

8. Մի պատմություն գրի՛ր այն մասին, որ կենդանիները ևս կարող են ***շնորհակալություն*** հայտնել, ***ներողություն*** խնդրել կամ ***օգնություն ցույց տալ***:



9. Քաղաքավարության և բարեկրթության կանոններ մշակե՛ք, գրի՛ առեք պաստառի վրա և ներկայացրե՛ք:



ՀԱՐՑԵՐԻ ՊԱՐԸ

Դ. Չերսիսյան

Ինչ լուսավոր ճառագայթ է,
Որ սահում է արևից,
Որտեղի՞ց է այսքան ջուրը,
Որ կաթում է վերևից:
Եվ որտեղի՞ց կարմիր գույնը,
Կապույտն ինչո՞ւ է կապույտ,
Ինչո՞ւ է ջինջ ու պարզ ջուրը,
Իսկ գիշերը՝ սև ու մութ:
Եվ երգերը, նաև քամին.
Գույներ՝ կարմիր ու դեղին,
Ասֆալտը սև, ջրերը ջինջ,
Ախր ինչի՞ց են, ինչի՞ց,
Եվ ո՞վ ես դու, և ո՞վ եմ ես,
Ես չգիտեմ.
Դու գիտե՞ս...

1. Թվարկի՛ր, թե ինչ հարցեր է տալիս հեղինակը:
2. Առանձնացրո՛ւ դրանցից մեկն ու պատասխանի՛ր:

3. Բանաստեղծությունից հարցում արտահայտող բառերը դո՛ւրս գրիր և նոր հարցեր կազմի՛ր:

4. ***Ի՞նչ***, ***ինչո՞ւ***, ***ինչպե՞ս***, ***որտե՞ղ*** հարցերով խաղ խաղացեք այսպես.



5. Հինգ րոպեում ո՞վ շատ հարց կկազմի նկարների շուրջ: Օրինակ՝

Ի՞նչ է սիրում ուտել արջը:

Ո՞րն է ավելի արագավազ կենդանի:

6. Բառ-նկարները դասավորի՛ր այնպես, որ հաջորդ նկարի անվանումը մեկ հնչյունով ավելի լինի նախորդ նկարի անվանումից:

7. Նկարագրե՛ք ձեզ՝ պատասխանելով հարցերին.

- ի՞նչ է անունդ,
- ե՞րբ ես ծնվել,
- ո՞րն է քո սիրելի գույնը,
- ո՞րն է քո կարդացած առաջին գիրքը,
- ի՞նչ ես երազում դառնալ,
- ո՞րն է քո սիրելի զբաղմունքը,
- ներկայացրե՛ք միմյանց ձեր լրացրած թերթիկները և պարզե՛ք՝ կան արդյոք նմանություններ:

8. Լուսանկարներով և դրանց համապատասխան մակագրություններով՝ «Սա մենք ենք» վերնագրով ալբոմ պատրաստե՛ք:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Բնութագրի՛ր քեզ՝ քո բնավորությունը, քո շփումները ընտանիքիդ անդամների, ընկերներիդ, շրջապատող մարդկանց հետ:

2. Ի՞նչ «կախարդական» բառեր գիտես, որոնք հաճախ ես օգտագործում, ու մարդիկ ժպտալով պատասխանում են քեզ:

3. Քաղաքավարության և բարեկրթության ի՞նչ կանոններ գիտես: Ինչպիսի՞ վարքագիծ են դրանք պահանջում քեզնից: Ներկայացրո՛ւ:

4. Ի՞նչ իրավունքներ ու պարտականություններ ունես դու ընտանիքում, դպրոցում, բակում կամ այլ վայրերում, որտեղ հաճախ ես լինում:
Առանձնացրո՛ւ դրանցից ամենակարևորները և ներկայացրո՛ւ:

ՀԻՇԻ՛Ր

Այբուբենը յուրաքանչյուր լեզվի համար գործածվող տառերի ամբողջություն է՝ ավանդաբար պահպանվող որոշակի դասավորությամբ:

Հայերենի այբուբենն ունի երեսունվեց հնչյուն, բայց երեսունութ տառ:

Տառը գրում ենք և կարդում, իսկ **հնչյունն** արտասանում ենք և լսում:

Հայերենում կա վեց ձայնավոր (ա, է, ը, ի, ու, օ) և երեսուն բաղաձայն հնչյուն (բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ):

Իսկ ի՞նչ գիտես ե-ի, ո-ի, և-ի մասին: Կրկնի՛ր:

ԲԱՌԱՑԱՆԿ



ագռավ
անդադար
անընդհատ
աշխարհ
ասֆալտ
արև
բարև
բոյ քաշել *հասակ առնել, մեծանալ*
թռչուն
թև
խնդրել
ծիածան
կողպեք *փականք*
կեղտոտ
համբույր
հույս տալ *քաջալերել, հուսադրել, ոգևորել*
նախշուն *զարդարուն, սիրուն*
շաբաթ
շիկանալ *կարմրանալ*
շնորհակալություն
ոսկեհատիկ
ով (ովքեր)
պատշգամբ
ջինջ *պարզ, վճիտ, զուլալ*
սև
վարդ
վերև
ցող *շաղ, եղյամ*

Մուտքի
խոսք

Ես կարող եմ

ԱՐԱԳԻԼՆ ՈՒ ՍԱԳԸ

(հայ ժողովրդական հեքիաթ)

Մշակումը՝ Հ. Մկրտչյանի

Մի անգամ սագը՝ ուռած, փքված, պարծենում էր շրջապատողների առաջ՝ ասելով.

- Ո՞վ կա ինձնից ուժեղ. ծովում լողալ գիտեմ, ցամաքում ման գալ և օդում՝ թռչել:

Այդ ժամանակ ծառի բարձր կատարին նստած արագիլը լսում է փքված սագի խոսքերը, ցած է իջնում և հարցնում.

- Լսի՛ր, սագիկ քույրիկ, ասա, դու օդում արծվի պես ճախրել գիտե՞ս:

- Ո՛չ,- պատասխանում է սագը:

- Լա՛վ, իսկ ջրում ձկան պես լողալ գիտե՞ս:

- Ո՛չ ,- դարձյալ պատասխանում է սագը:

- Ցամաքում աղվեսի պես վազել գիտե՞ս:

- Ո՛չ, այդ էլ չգիտեմ:

- Ուրեմն, մի՛ պարծենա, շատ բաներից քիչ իմացողը ոչինչ չի իմանա,- ասում է արագիլն ու թևին տալիս, թռչում:



Ես կարող եմ

1. Որտեղ է տեղի ունենում այս պատմությունը:
2. Իր ո՞ր կարողություններով էր պարծենում սագը:
3. Արագիլի հարցերից պարզվեց՝ ինչ չի կարող անել սագը:

4. Ըստ հեքիաթի բացատրեք՝ ***«Շատ բաներից քիչ իմացողը ոչինչ չի իմանա»*** արտահայտությունը:
5. Համեմատեք արագիլի և սագի արտաքին տեսքն ու ապրելակերպը:

6. Ներկայացրեք, թե որ կարողություններով են նման ու տարբեր այս թռչունները:
7. Դուրս գրիր տեքստից այն հարցերը, որ արագիլը տվեց սագին:
8. Գրի՛ր արագիլին կամ սագին բնութագրող բառեր:

9. Ըստ աղյուսակի՝ ներկայացրու, թե ինչ կարող են անել այս երեխաները:

	+	+	+	+	−	+	+
	+	+	−	+	+	+	−

10. Գծի՛ր աղյուսակ «Ես կարող եմ», «Ես չեմ կարող» սյունակներով և լրացրու՝ բնութագրելով ինքդ քեզ:

11. Յուրաքանչյուրդ գրեք երկու թռչնի անուն: Բնութագրումների կամ մնջախաղի միջոցով ներկայացրեք միմյանց՝ գուշակելու համար:

12. Գրեք, թե ինչ թռչուններ են պատկերված, ընտրեք նրանցից յուրաքանչյուրին բնութագրող տողը և հիմնավորեք:

Սրածայր կտուցով փորում է ծառը:

Վարժեցնես՝ կխոսի մարդու նման:

Գարնան ավետաբերն է:

Երկու սիրուն աչիկ ունի, մկրատաձև պոչիկ ունի:

13. Երևակայիր, որ բջջային հեռախոսով զրուցում ես չվող թռչուններից մեկի հետ.

- ո՞ր թռչնին են ուղղված քո հաղորդագրությունները,
- ի՞նչ խորհուրդներ կտաս նրան,
- գրավոր ներկայացրո՛ւ մի հատված ձեր գրագրությունից:

14. Ձմեռող թռչուններին օգնելու պլան մշակեք և ներկայացրեք.

- ձմեռող ի՞նչ թռչուններ գիտեք,
- որոշեք, թե որ թռչուններին եք պատրաստվում օգնել ձմեռելու,
- ի՞նչ խնդիրներ են նրանք ունենում ձմռանը,
- ի՞նչ աշխատանքներ եք պլանավորում իրականացնել նրանց օգնելու համար,
- պարզեք, թե խմբի անդամներից յուրաքանչյուրն ինչ կարող է անել:

ԿԱՆԱՉ ԳՈՐՏԻ ՀԵՔԻԱԹԸ

Վահագն Գրիգորյան

Մի գեղեցիկ օր կենդանիները հավաքվեցին որոշելու, թե ով որտեղ ապրի: Ձկները հարմար գտան ապրել ջրում: Դա նրանց ճաշակով էր: Շատ կենդանիների ցամաքն էր դուր գալիս, և նրանք ընտրեցին լեռները, անտառներն ու հոտավետ մարգագետինները: Այսպես ամեն մեկն իր տեղը գտավ: Մնաց կանաչ գորտը:

Գորտը ոչ մի կերպ չէր կարողանում ընտրություն կատարել: ՉլՀմփ, նետվում էր ջուրը, հետո նրան թվում էր, թե ցամաքի վրա էր լավ: Գլուխը հանում էր ջրից ու վրա տալիս.

- Դեռ չեմ որոշել:

Հետ էր ցատկում ափ, թվում էր՝ ջրում ավելի լավ էր: Թաթերը չռած, աչքերը չռած՝ կոկորդով մեկ կոկռում էր.

- Դեռ չեմ որոշել:

Գազաններն ու ձկները համոզում էին, խնդրում, բայց գորտը չէր լսում նրանց: Մեկ, չլՀմփ, ջուրն էր նետվում, մեկ հետ ցատկում ափ ու ամեն անգամ շուտասելուկի պես վրա տալիս.

- Դեռ չեմ որոշել, դեռ չեմ որոշել...

Ձկների աչքերը դուրս թռան բներից, գազանների ականջները սկսեցին երկարել, բարկացան, հոգնեցին, ձանձրացան, և ամեն մեկն իր գործին գնաց:

Իսկ կանաչ գորտը մինչև օրս չի որոշել, թե որտեղ և ինչպես լավ կլինի ապրել: Առավոտից երեկո ջուրն ու ցամաքն է փորձում, հետո էլ ձայնը գլուխը գցած զգուշացնում է.

- Դեռռռռռ-կՀռռռռ.... դեռռռռռ-կՀռռռռ...



1. Ինչո՞ւ էին հավաքվել կենդանիները:
2. Ի՞նչ էին համոզում կենդանիները գորտին:
3. Ըստ պատմվածքի՝ ի՞նչ է նշանակում գորտի կոկռոցը:
4. Քո կարծիքով ինչո՞ւ գորտը մինչև օրս չի որոշել, թե որտեղ է ապրելու:

Ուսուցողական հեքիաթներ

5. Անվանիր նկարները և խմբավորիր ***ջուր*** և ***ցամաք*** բառերի շուրջ:

6. Արագ և բարձրաձայն արտասանիր ***շուտասելուկը:***

Գետը գորտի մասին գիտի այնքան,
Ինչքան՝ գորտը գետի:

7. Տեքստից դուրս գրիր միավանկ և երկվանկ բառեր:
8. Վանկատիր բառերը.

գլուխ	***մկրատ***	***կոկռալ***
խնդրել	***ձկներ***	***զնգզնգալ:***

9. Բառերն օգտագործիր բառակապակցությունների մեջ:

10. Քննարկեք և ներկայացրեք այս բնակավայրը.

- ինչ շինություններ եք տեսնում նկարում,
- որտեղ են մարդիկ ապրում,
- բնակարաններից ու տներից բացի՝ ինչ շինություններ կան նկարում,
- ինչի՞ համար են դրանք:

11. Ուսումնասիրեք և պաստառի վրա ներկայացրեք ձեր բնակավայրը:

ՀԱՄԱՌ ՄՐՋՅՈՒՆԸ

Վասիլի Սուխոմլինսկի



Վազում էր փոքրիկ, սևուկ մրջյունը. տուն էր շտապում: Իր փոքրիկների համար մեխակի սերմ էր տանում: Մեկ էլ տեսավ՝ ճանապարհին ընկած էր դդմի մի կորիզ՝ մեծ, քաղցր, բուրավետ: Մրջյունը մեխակի սերմը դրեց մի կողմ: Մեջքին առավ դդմի կորիզը, բայց չկարողացավ պահել, կորիզը սահեց, ընկավ: Կրկին բարձրացրեց, դարձյալ կորիզն ընկավ: Այդպես մի քանի անգամ բարձրացրեց մեջքին, բայց այն շարունակ ընկնում էր:

Մեկ էլ մրջյունը լսեց մեկի ցածր քմծիծաղը: Նայեց, տեսավ ճանապարհին նստած է ճպուռը.

- Հազար անգամ կորիզը բարձրացրիր՝ ընկավ,- ասաց ճպուռը,- չձանձրացա՞ր: Տեսնում ես՝ մի բան դուրս չի գալիս, թող ու գնա:

- Բան դուրս չի գա նրանց համար, ովքեր ջանք չեն թափում և միայն հաշտվում են անհաջողությունների հետ,- պատասխանեց մրջյունն ու շարունակեց իր գործը:

1. Ո՞ւր և ինչո՞ւ էր շտապում մրջյունը:
2. Ի՞նչ պատահեց ճանապարհին:
3. Ի՞նչ խորհուրդ տվեց նրան ճպուռը:
4. Ի՞նչ պատասխանեց մրջյունը, և ի՞նչ միտք կա թաքնված նրա ասածի մեջ:
5. Քո կարծիքով մրջյունը կհասնի՞ իր ուզածին:

6. Քննարկե՛ք պատմվածքի վերնագիրը՝ «Համառ մրջյունը»:
7. Բացատրե՛ք ըստ առակի, թե բնավորության ինչպիսի գիծ է համառությունը:

8. Բառերի վանկերը խառնվել են: Վերականգնի՛ր այդ բառերը և գրի՛ր:

դում դը ճը

մրջ պուռ յուն

9. Տեքստից դո՛ւրս գրիր հինգ բառակապակցություն:

10. Արտագրի՛ր պատմվածքի հիմնական միտքն արտահայտող նախադասությունը:

11. Գուշակի՛ր հանելուկները և պատկերի՛ր պատասխանները:

Երեկ տեսա մի քարավան
Ճամփա ելած՝ գնում էր Վան,
Պոչ-պոչ բռնած, շարքով կարգին
Մի-մի հատիկ առած մեջքին:

(ղնձնտրդ)





Արքա չունեն, սակայն արագ
Կազմում են մեծ, ահեղ բանակ,
Հենց մտնում են արտը հասած՝
Բերքն են հնձում առանց դանակ:

(ղսնբկտ)

Գարնան հետ գալիս, աշնանը՝ գնում,
Բարձրիկ տեղերում իր բույնն է դնում,
Երբ կեր է տալիս նա իր ձագերին՝
Թևն է դեմ անում բարկ արեգակին:

(ոնտժկտ)





Ի՞նչ միջատ է ժրաջան,
Ճարտարապետ՝ աննման,
Ծաղկից ծաղիկ թևածում՝
Աշխատում է օրնիբուն,
Ծաղկափոշին հավաքում,
Մարդուն ի՞նչ է պարգևում:

(ղբմտ)

12. Օգտվելով նկարներից՝ շարունակեք հեքիաթը.

Ճպուռը թռավ, հեռացավ...

- յուրաքանչյուր խումբ ներկայացնի հեքիաթի իր տարբերակը,
- ներկայացրած հեքիաթներից ընտրեք առավել դուր եկած հատվածները,
- միավորեք այդ հատվածները՝ ամբողջացնելով հեքիաթը և վերնագրեք,
- գրի՛ առեք պաստառի վրա,
- նկարազարդեք,
- բեմադրեք:



Հեքիաթներ միջատների մասին

ՓԻՂՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆՆԵՐԸ

Տոնի Մարկուչի

Մի անգամ երկու մրջյուն վերադառնում էին մրջնանոց: Ճանապարհին նրանց առջև հանկարծ հայտնվեց մի հսկա փիղ:

- Կանգնի՛ր: Տեղիցդ չշարժվես,- կարգադրեց մրջյուններից մեկը: Սրանից դենը մեր տարածքն է...

- Իսկ եթե չհնազանդվես,- լրացրեց մյուսը,- մենք քեզ կստիպենք...

- Երկուսդ մեկի դեմ,- վախեցած բացականչեց փիղը,- անարդար է:



տարածք

անարդար

կարգադրել

հնազանդվել

1. Քո կարծիքով ի՞նչ նկատի ունեին մրջյունները՝ «սրանից դենը մեր տարածքն է» ասելով:
2. Քո կարծիքով ի՞նչ կարող էին անել մրջյունները փղին՝ թույլ չտալով նրան մտնել իրենց տարածք:
3. Կարծում ես փիղը վախեցա՞վ, թե՞ ձևացրեց, որ վախենում է:
4. Ի՞նչը տեքստում քեզ զարմացրեց, զվարճացրեց կամ որևէ հետաքրքիր միտք տվեց:
5. Համեմատի՛ր բնության այս երկու էակներին՝ փղին ու մրջյունին:

6. Պատկերացրե՛ք՝ վեճը շարունակվեց, և փիղն ու մրջյունները դիմեցին անտառի թագավոր առյուծին՝ խնդրին լուծում տալու համար:

Կազմե՛ք երկխոսություններ ու ներկայացրեք.

- առյուծի և մրջյունների միջև,
- առյուծի և փղի միջև,
- առյուծի որոշումն ու արքայական խոսքն իր հպատակներին:



7. Միացրու՛ վանկերը և ստացի՛ր բառեր.

յուծ		ար		ճա		րածք	
	նա		պարհ		մրրջ		
յուն		տա		առ		դար	

8. Տեքստից առանձին շարքերով դո՛ւրս գրիր միավանկ և բազմավանկ բառերը:

9. Պատմեք միմյանց ձեր առօրյայի մասին՝ լրացնելով հետևյալ նախադասությունները.

10. Դիր ձեռքդ պաստառի վրա ու մի քանի անգամ եզրագծիր: Յուրաքանչյուր մատի վրա գրիր, թե ինչ կարող ես անել դու: Պաստառը վերնագրիր՝ ***Ես կարող եմ...***



11. Օգտվելով նկարներից՝ պատրաստեք և ներկայացրեք պաստառ՝ ձեր իրավունքների և պարտականությունների մասին:

ՄՈՌԱՑՎԱԾ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԸ

Դոնալդ Բիսեթ

Կար-չկար մի մեծ փիղ կար: Այս փիղն իր կնոջ ու Յալմար անունով տղայի հետ ապրում էր գազանանոցում:

Հայր փիղը շատ մեծ էր: Մայր փիղն էլ էր մեծ: Դե, Յալմարն էլ փոքր չէր: Փղերն ընդհանրապես փոքր լինո՞ւմ են:

Մի սիրուն օր փիղ մայրիկն ու փղիկը տեսան, որ փիղ հայրիկը կանգնել է գլխի վրա:

- Ի՞նչ ես անում,- հարցրեց փիղ մայրիկը:

- Մի բան եմ ուզում հիշել,- պատասխանեց փիղ հայրիկը:

- Ի՞նչ ես ուզում հիշել:

- Որ իմանայի, էլ ինչո՞ւ էի չարչարվում,- պատասխանեց փիղ հայրիկը:- Ճիշտ չե՞մ ասում:

- Յալմա՛ր,- ասաց փիղ մայրիկը տղային,- շուտ վազի՛ր ու իմացի՛ր՝ ինչ է մոռացել հայրիկդ:

Ու Յալմարը ճամփով վազեց: Հետո եղեգնուտի կողքի փոքր բլուրը բարձրացավ ու նստեց, որ հանգստանա, հետո էլ նայի, թե ինչպես են ամպերը երկնքում խաղում:

Հանկարծ լսեց, որ մեկը լաց է լինում:

Հենց իր կողքին էին լաց լինում, բայց Յալմարը չէր տեսնում, թե ով է, ու ասաց.

- Մի՛ լացիր, ուզում ես՝ օգնեմ քեզ:

Լացը դադարեց:

- Դու ո՞վ ես,- հարցրեց Յալմարը:

- Մոռացված Ծննդյան օրն եմ: Չգիտեմ էլ, թե ո՛ւմն եմ:

- Վա՛յ,- ասաց Յալմարը,- ա՛յ քեզ բան: Իսկ տորթ ունե՞ս:

- Բա ո՞նց: Առանց տորթի՝ ի՞նչ ծնունդ: Իմ տորթի վրա յոթ մոմ կա, ուրեմն, ինչ-որ մեկն այսօր յոթ տարեկան է դառնում:

«Ինչ լավ է,- մտածեց Յալմարը,- շատ լավ է: Համարյա ութ տարեկան դառնալու չափ լավ: Հինգ տարեկանն էլ վատ չէ, դե, չորսն էլ ոչինչ: Ա՛յ, ութն ուրի՞շ է. ութ տարեկան որ լինես, արդեն հենց այդքան կմնա, որ մեծ մարդ դառնաս»:

Յալմարը տուն վազեց:

- Հիշել եմ,- ասաց փիղ հայրիկը,- ես այդպես էլ գիտեի, որ դա երեկ էր, կամ վաղը, կամ էլ՝ այսօր:

- Ինչն է այսօր,- հարցրեց Յալմարը:

- Այսօր քո ծննդյան օրն է,- սենյակ մտնելով՝ ասաց փիղ մայրիկը: - Այսօր քո յոթ տարեկանը լրացավ:

Յալմարը ուրախացավ, հուզվեց ու շուտ հետ վազեց եղեգնուտի մոտի փոքր բլուրը:

- Լսի՛ր,- գոռաց նա,- պարզվեց, որ դու ի՛մ Ծննդյան օրն ես. այսօր ե՛ս եմ յոթ տարեկան դառնում:



- Ո՛ւխ,- ուրախացավ մոռացված Ծննդյան օրը,- ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն:

Երեկոյան թեյի հետ Յալմարն ստացավ իր տոնական տորթը, վրան էլ՝ յոթ մոմ: Նա երազանք պահեց, կնճիթը ձգե՛ց, յոթն էլ միանգամից հանգցրեց:

1. Ինչ էր պատահել Յալմարենց տանը:
2. Հեքիաթի ո՞ր տողերը քեզ զարմացրին ու անիրական թվացին:
3. Ինչ զգացողություններ ունեցավ Յալմարը, երբ իմացավ իր ծննդյան օրվա մասին:
4. Ինչ ավարտ ունեցավ այս տարօրինակ պատմությունը:

5. Քննարկե՛ք, թե որքան կարևոր է հիշել սիրելի մարդկանց ծննդյան օրերը:
6. Միմյանց ներկայացրե՛ք ձեր ընտանիքի անդամների ծննդյան օրերը:
7. Ինչ եք կարծում ձեր խաղալիքները կամ ընտանի կենդանիները ծննդյան օր ունե՞ն:

8. Կազմի՛ր բառակապակցություններ՝ տրված նկարների վերաբերյալ: Օրինակ՝ գույնզգույն փուչիկներ:

9. Տրված բառաշարքից դո՛ւրս գրիր այն բառը, որը մյուս բառերից տարբերվում է վանկերի քանակով.

- ծիրան, նուռ, բալ, սեխ,
- աղվես, նապաստակ, կապիկ, եղնիկ,
- դաշնամուր, շվի, ջութակ, կիթառ,
- դասագիրք, պայուսակ, մատիտ, պահարան:

10. Դուրս գրած բառերով կազմի՛ր բառակապակցություններ:

11. Տարվա օրացույցի վրա նշեք ձեր ընկերների ծննդյան օրերը և ամրացրեք դասասենյակի պատին:

12. Շնորհավորական բացիկ պատրաստեք միմյանց համար և նվիրեք իրար:

13. Քննարկեք և ներկայացրեք մի որևէ թխվածքի բաղադրատոմս, որ կարող եք ինքներդ պատրաստել.

- անվանեք թխվածքը,
- թվարկեք բաղադրամասերն իրենց չափաքանակով,
- թվարկեք պատրաստման համար անհրաժեշտ խոհանոցային գործիքները,
- պաստառի վրա գրեք պատրաստման հաջորդական քայլերը,
- որոշեք, թե զարդարանքի ինչ միջոցներ եք օգտագործելու. ***հատապտուղներ, կոնֆետներ, սառնաշաքար, ծաղիկներ***...
- նկարեք ձեր տոնական թխվածքի ավարտուն տեսքը:

Զվարճալի հեքիաթներ

ՏԱՏԻԿԻ ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

Գյուլբադան Զաքաևա

Դորենը սիրում էր քանդել իր խաղալիքները:

- Հետաքրքիր է, թե իմ ռոբոտը ինչպես է շարժվում,-ասում է նա ու քանդում:

- Հետաքրքիր է՝ ինչպես է հեռախոսը զնգում:

Պարզելու համար նա մաս-մաս արեց հեռախոսը:

Քանդած խաղալիքների մասերը Դորենը շաղ էր տալիս ողջ տնով մեկ: Նա պոկել էր ռոբոտի գլուխը: Նրա մեքենան առանց անիվների էր, իսկ ինքնաթիռը՝ առանց թևերի:

Բոլոր խաղալիքները շատ տխուր տեսք ունեին:

- Ես քեզ կարող եմ ցույց տալ, թե ինչպես կարելի է վերանորոգել վնասված խաղալիքները,- առաջարկեց հայրիկը: Բայց Դորենին պարզապես դուր էր գալիս մաս-մաս անել խաղալիքները, որոնց թիվը գնալով ավելանում էր:

Մի օր Դորենենց ընտանիքը հյուր գնաց տատիկի տուն: Տատիկը ջերմորեն գրկեց իր թոռնիկին: Դորենը շատ էր սիրում տատիկին: Տատիկը շատ գրքեր ուներ, և Դորենն ու տատիկը միշտ միասին գիրք էին կարդում: Տատիկն ուներ նաև մի գեղեցիկ ժամացույց՝ երգող կկվով, որը ժամը մեկ կու-կու, կու-կու էր կանչում:

- Հետաքրքիր է՝ կկուն

իսկական է,- մտածեց Դորենը:

Պարզելու համար նա քանդեց ժամացույցը: Ափսո՜ս՝ կկուն իսկական չէր:

Դորենը ժամացույցը տեղը դրեց՝ պահարանի վրա, բայց առանց կկվի այն չէր աշխատում:

«Ի՞նչ կարելի է անել». Դորենը փորձեց ձեռքով շարժել ժամացույցի սլաքները, բայց՝ իզուր...

- Կո՛ւ-կո՛ւ, կո՛ւ-կո՛ւ,- ասաց Դորենը:

- Իմ կկուն այսօր տարօրինակ ձայն է հանում,- ասաց տատիկը,- կարծում եմ՝ կկվին ինչ-որ բան է պատահել:

Տատիկը շատ տխուր էր: Դորենն էլ տխրեց:

- Տատի՛կ,- խոստովանեց Դորենը,- ես եմ փչացրել քո ժամացույցը, ների՛ր: Բայց խոստանում եմ՝ հենց հիմա կվերանորոգեմ:

Դորենը ժամացույցի մասերը դրեց սեղանին, փորձեց նորոգել, բայց դա այնքան էլ հեշտ չէր, ինչպես թվում էր նրան:

- Հայրի՛կ, կօգնե՞ս նորոգել այս ժամացույցը:

- Հաճույքով,- պատասխանեց հայրիկը:

Դորենն ու հայրիկը նորոգեցին ժամացույցը, ու կկուն նորից երգեց. կո՛ւ-կո՛ւ, կո՛ւ-կո՛ւ:

Տատիկն ուրախացած համբուրեց Դորենին:

- Այ սա իմ կկվի ձայնն էր,- ասաց տատիկը,- ապրես, որ նորոգեցիր:

Երբ Դորենը տուն վերադարձավ, տեսավ իր ջարդուփշուր եղած ու դեսուդեն թափված խաղալիքները:

- Ես ձեզ էլ կնորոգեմ,- ասաց նա ու գործի անցավ:

1. Ըստ պատմվածքի՝ նկարագրիր Դորենին:
2. Քո կարծիքով քանի՞ տարեկան էր Դորենը:
3. Ի՞նչ տարօրինակ սովորություն ուներ նա:
4. Ի՞նչ վիճակում էին նրա խաղալիքները:
5. Ի՞ նչ պատահեց, երբ Դորենն այցելել էր իր տատիկին:
6. Ինչպե՞ս սկսվեց ու ավարտվեց այս պատմությունը:

7. Քննարկե՛ք և ներկայացրեք.

- որո՞նք են ձեր ամենասիրելի խաղալիքները,
- կարելի՞ է արդյոք խաղալիքներին անուններ տալ, ընկերանալ, զրուցել նրանց հետ,
- ինչպե՞ս եք խնամում ձեր խաղալիքներն ու անձնական իրերը:

8. Բնութագրե՛ք այս երկու սենյակներից յուրաքանչյուրում ապրող երեխային:



9. Պատմությունից դո՛ւրս գրիր այն խաղալիքների ու իրերի անունները, որոնք Դորենը վնասել էր:
10. Թվարկի՛ր և կազմի՛ր քո բոլոր խաղալիքների ցուցակը:
11. Գրի՛ր մի պատմություն քո ամենահին, նոր, ամենասիրելի խաղալիքներից կամ իրերից մեկի մասին:

12. Ըստ նկարների՝ պատմեք, թե ինչ են սովորում այս երեխաներն իրենց ընտանիքի անդամներից:

13. Ներկայացրեք, թե դուք ումից ինչ եք սովորել:

14. Ըստ նկարի՝ ներկայացրու ընտանիքի անդամներին:



15. Օգտվելով նկարներից՝ գրի՛ր ըստ օրինակի.

Արամը Արմենի պապն է:

Սոնան ու Արան...

16. «Երկրորդ կյանք խաղալիքներին ու վնասված իրերին» խորագրով աշխատանքներ նախագծե՛ք.

- գրե՛ք հայտարարություն վնասված խաղալիքներ, տարբեր իրերից մնացած հետաքրքիր մասեր հավաքելու մասին,
- հավաքած իրերի տարբեր մասեր համադրելով՝ նոր խաղալիքներ պատրաստե՛ք,
- կազմակերպե՛ք այդ նոր ձեռագործ աշխատանքների ցուցադրությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ինչպիսի՞ն կարող ես լինել դու: Ե՞րբ և ինչո՞ւ...

Իմ ճշմարտախոս «ես» ***Իմ բարի «ես»***
Իմ աշխատասեր «ես» ***Իմ երևակայող «ես»***
Իմ չարաճճի «ես» ***Իմ շատախոս «ես»:***

2. Հաճա՞խ ես արդյոք լսել կամ ինքդ օգտագործել նշված արտահայտությունները՝ ե՞րբ կամ ի՞նչ առիթով.

«Կարո՞ղ եմ օգնել քեզ», «Ուզո՞ւմ ես օգնեմ քեզ»

3. Ընկերներիդ հետ երկխոսություններ կազմի՛ր՝ գործածելով այդ արտահայտությունները:

4. ***Խաղ-առաջադրանք:*** Դասասենյակի պատերին պաստառներ փակցրե՛ք հետևյալ գրառումներով.

Ես պետք է..... Ես ուզում եմ.....

Ես կարող եմ..... Ես սիրում եմ.....

Խմբեր կազմե՛ք և հերթականությամբ բոլոր պաստառների վրա, ըստ մակագրությունների, գրառումներ կատարե՛ք: Պարտադիր է կարդալ արդեն արված գրառումները և չկրկնել դրանք: Շրջապտույտի ժամանակը պահում է խաղավարը:

Հիշի՛ր

Բառը ինչյունների խումբ է, որն իմաստ է արտահայտում.

տուն, քար, մարդ:

Բառակապակցությունը երկու կամ ավելի բառերի համադրություն է.

հոտավետ ծաղիկ, արագ վազել:

ԲԱՌԱՑԱՆԿ

այսօր	
անարդար	
աչք	
առաջարկել	
բարձր	
բլուր	*գնդաձև կամ կոնաձև բարձունք՝ բարձրություն գետնի երեսին*
դադարել	
եղեգնուտ	*եղեգով պատված տեղ՝ վայր*
երգել	
երեկո	*իրիկուն, մթնշաղ*
կարգադրել	
կենդանի	
հնազանդվել	
ձգել	
ճախրել	*սրընթաց թռչել, սավառնել*
ճանապարհ	
մարգագետին	*կանաչով և ծաղիկներով ծածկված տարածություն*
մրջյուն	
ջանք	*որևէ աշխատանքի համար գործադրված եռանդ՝ ուժ*
վեճ	*կռիվ*
վերանորոգել	*վերականգնել*
տարածք	
փորձել	
քմծիծաղ	*հեգնանք արտահայտող ծիծաղ՝ ժպիտ*
քրքիջ	*բարձրաձայն ծիծաղ*
օգնել	
օդ	

Մուտքի խոսք

Երբ նա փոքր էր

ՄԵԾ ԵՐԵՎԱԿԱՅՈՂԸ

Հիշո՞ւմ ես Անդերսենի «Անճոռնի ճուտիկը» հեքիաթը, թե ինչպես էին բոլորը նեղացնում, ծաղրում խեղճ ճուտիկին միայն այն բանի համար, որ նա նման չէր իրենց... Իսկ երբ մեծացավ, անճոռնի ճուտիկը վերածվեց գեղեցիկ կարապի...

Պատկերացնո՞ւմ ես, այդպես է եղել նաև Անդերսենի կյանքում:

Անդերսենը յուրահատուկ երեխա էր: Նա համարյա չէր խաղում հասակակիցների հետ, միշտ առանձնացած էր՝ տարված իր երևակայություններով: Նրա խաղերն ուրիշ էին: Նա սիրում էր տիկնիկային ներկայացումներ բեմադրել, պատմություններ էր հորինում ու անվերջ երազում...

Անդերսենը հավատում էր, որ մի օր կհասնի իր երազանքներին, կդառնա հայտնի ու կզբաղվի իր սիրած գործով: Չգիտեր, թե երբ և ինչպես այդպես կլինի, բայց հավատում էր...

Ու հենց այդ հավատն էր, որ ուժ տվեց նրան: Նա պայքարեց ու հասավ իր երազանքին: Նա դարձավ աշխարհահռչակ հեքիաթագիր:

1. Ինչ իմացար Հանս Քրիստիան Անդերսենի մանկության մասին:
2. Ինչ բնավորության գծեր ուներ Անդերսենը փոքր տարիքում, որի շնորհիվ էլ դարձավ աշխարհահռչակ հեքիաթագիր:
3. Ո՞րն էր Անդերսենի մանկության սիրելի խաղերից մեկը:
4. Ինչ գիտես տիկնիկային ներկայացումների մասին:

5. Ըստ նկարի՝ թվարկի՛ր, թե ինչ առարկաներ կան դասարանում:
6. Նայի՛ր նկարին, բառերի երկու սյունակ կազմի՛ր. մեկում գրի՛ր մեկ առարկա, մյուսում՝ մեկից ավելի առարկաներ ցույց տվող բառեր:

7. Շարունակի՛ր ըստ օրինակի.

ճուտիկ - ճուտիկներ

կարապ - ...

երազանք - ...

պատմություն - ...

հեքիաթ - ...

փիկնիկ - ...

8. Կարդացե՛ք և քննարկե՛ք Հանս Քրիստիան Անդերսենի «Անճոռնի ճուտիկը» հեքիաթը.

- ինչո՞ւ է հեքիաթասացը «Անճոռնի ճուտիկը» վերնագիրն ընտրել,
- ինչպե՞ս է սկսվում և ավարտվում հեքիաթը,
- ի՞նչ այլ վերնագիր կառաջարկեք:

9. Ուշադիր դիտե՛ք նկարները և գտե՛ք տասը տարբերություն:

10. Ավարտեք Անդերսենին ուղղված նամակը՝ լրացնելով նախադասությունները:

Բարև, սիրելի՛ Հանս Քրիստիան Անդերսեն: Ձեզ գրում են երկրորդ դասարանցիները: Մենք կարդացինք Ձեր գրած «Անճոռնի ճուտիկը» հեքիաթը:

Մեզ դուր եկավ այն, որ...

Մեզ դուր չեկավ այն, որ...

Մենք հեքիաթում կփոխեինք ...

Մենք կլինենք ...

Շնորհակալ ենք, որ ...

11. Ինչ գործողություն են կատարում նկարում պատկերված երեխաները:

12. Մշակեք և պաստառի վրա ներկայացրեք գրադարանից օգտվելու համապատասխան վարքագծի կանոնները:

Հանս Քրիստիան
Անդերսեն
ՀԵՔԻԱԹՆԵՐ

ԿԱԽԱՐԴՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԸ

Ֆիլիարմոնիայի դահլիճում համերգ էին տալիս փոքրիկ երաժիշտները:

Համերգավարը հետնաբեմում փնտրում էր Առնոյին: Բեմ դուրս գալու հերթը նրանն էր:

- Ո՞ւր է այդ տղան,– բարկանում էր նա,– մի ամբողջ ծրագիր պիտի նվագի:

Դահլիճի ծափերը դադարել էին.հանդիսատեսը սպասում էր:

- Մոցարտ, սոնատ դաշնամուրի համար, կատարում է Առնո Բաբաջանյանը:

Համերգավարի ձայնը լսելուն պես պատանին վազեվազ, քրտնաթոր իրեն հետնաբեմ գցեց, որտեղից էլ նրան բեմ հրեցին...

Անդրավարտիքը կավճոտ էր, տեսքը՝ անփույթ: Դահլիճին խոնարհվելիս, երբ քրտնած ձեռքերն ու ճակատը սրբելու համար փորձում էր գրպանից հանել թաշկինակը, բեմահարթակին թափվեցին կավիճ, հոլ, գունավոր մատիտներ...

Դահլիճի աշխույժ ու աղմկոտ ծիծաղի ուղեկցությամբ տղան հապճեպ հավաքեց դրանք:

Մեկ րոպե անց դահլիճը կախարդված լսում էր...



1. Որտեղ է տեղի ունեցել այս պատմությունը:
2. Ինչ իրեր թափվեցին փոքրիկ երաժշտի գրպանից հենց համերգի պահին:
3. Քո կարծիքով ինչո՞ւ էր ուշացել փոքրիկ երաժիշտը:
4. Պատմության մեջ ո՞ր միտքն է հաստատում, որ բեմում ապագա մեծ երաժիշտ է:
5. Պատկերացրո՛ւ, որ պատրաստվում ես ելույթի: Ներկայացրո՛ւ, թե ինչպես կնախապատրաստվես և գրի՛ր գործողություններդ՝ ըստ առաջնահերթության:

6. Համացանցից տեղեկություններ դո՛ւրս բերեք հոլի մասին:
7. Պատմե՛ք՝ բակային ի՞նչ խաղեր գիտեք: Ի՞նչ խաղեր եք խաղում ընկերներով: Ներկայացրե՛ք դրանք:

8. Դիտիր նկարները և ասա՝ ով ինչ է անում:

1

2

3



4

9. Գրիր՝ գործողություն ցույց տվող ինչ բառեր օգտագործեցիր:

10. Օգտվելով տեքստից՝ լրացրու.

Համերգավարը...:

Ծափերը ...:

Հանդիսատեսը ...:

Կավիճը, հոլը, գունավոր մատիտները ...:

11. Գտի՛ր երաժշտական գործիքների անուններն այս աղյուսակում:

ա	հ	ց	հ	ը	ւ	ի	օ	լ	պ	ց	վ	բ	ն	ա
բ	ֆ	ռ	տ	ա	դ	ա	ս	դ	ֆ	գ	վ	տ	զ	հ
ա	ը	կ	ի	թ	ա	ռ	ա	ս	տ	ը	բ	լ	պ	ղ
ն	մ	ա	ե	տ	շ	ո	ռ	գ	դ	հ	ո	լ	ս	դ
ա	ո	ձ	ջ	գ	ն	ա	ո	ռ	ու	վ	ց	ղ	ա	ա
ս	ս	ե	ռ	գ	ա	ք	ո	ռ	դ	վ	ֆ	հ	ւ	լ
ա	ս	ֆ	հ	ը	մ	ո	ռ	ը	ու	վ	բ	յ	կ	օ
ե	ռ	տ	տ	ա	ու	վ	վ	ա	կ	ս	բ	ղ	վ	ս
ա	ս	դ	գ	հ	ր	ք	ո	ռ	գ	հ	յ	ի	օ	պ
ք	ն	ա	ր	ա	ք	դ	գ	հ	յ	ւ	ի	լ	ք	վ
ա	զ	ց	վ	բ	ն	մ	պ	օ	դ	ջ	ու	թ	ա	կ
ա	ս	շ	ե	փ	ո	ր	ա	ս	վ	բ	ն	մ	ն	ք
ա	ս	վ	գ	ջ	ու	թ	յ	կ	թ	ո	ռ	բ	ո	բ
կ	ի	ի	թ	ք	ա	ե	դ	ա	շ	ն	ա	ու	ն	մ
շ	դ	ի	թ	ա	ռ	դ	հ	ի	թ	մ	բ	կ	ու	լ

թմբուկ

դաշնամուր

12. Ներկայացրու այդ գործիքներից որևէ մեկը:

13. Լսիր Առնո Բաբաջանյանի ստեղծագործություններից մեկը և փորձիր նկարել տպավորություններդ: Ներկայացրու նկարածդ:

14. Գրիր՝ ինչ երաժշտական գործիքների ձայներ լսեցիր:

15. Հորինեք մի զվարճալի պատմություն, որի հերոսները երաժշտական գործիքներն են:

16. Գրեք, ձևավորեք մի հրավիրատոմս և հրավիրեք ձեր ընտանիքի անդամներին՝ ունկնդրելու Առնո Բաբաջանյանի որևէ ստեղծագործություն:

Հուշում՝ անհրաժեշտ է ճշգրիտ նշել համերգի.

- ամիս, ամսաթիվը,
- ժամը,
- վայրը:

Հեքիաթներ երաժշտության մասին

ԾԱՂՐԱԾՈՒՆԵՐԻ ԱՐՔԱՆ

Լյոնյան, ինչպես նրան դիմում էին, փոքր ժամանակ մասնակցում էր իր մայրիկի կազմակերպած ընտանեկան համերգներին: Հետո նա տարվեց տիկնիկային թատրոնով: Բակում, ծառի տակ նա իր հորինած սցենարներով տիկնիկային ներկայացումներ էր բեմադրում: Լյոնյան բակի աղջիկներին խնդրում էր բերել իրենց տիկնիկները, որ միասին ներկայացում ցուցադրեն: Հանդիսատեսները հարևան շենքերի բնակիչներն էին, որոնք ուրախ ծափահարում էին:

Փոքր տարիքում Լյոնյան հորինեց խաղ՝ սեղանի ֆուտբոլ: Նա ստվարաթղթից ֆուտ-բոլի մեծ դաշտ պատրաստեց՝ իսկական դաշտի նման, իսկ ֆուտբոլիստների դերում կոճակներ էին: Ամեն կոճակ

որևէ հանրահայտ ֆուտբոլիստի անունն ուներ: Այդ խաղը գրավել էր շրջակայքի բոլոր երեխաներին: Խաղում էին ֆուտբոլի իսկական կանոններով:

Լյոնյան՝ Լեոնիդ Ենգիբարյանը, ամենից շատ սիրում էր ծով, աշուն, Վան Գոգին և Պուշկինին:

Հաճելի դիմագծերով, մանկական պարզ ու բարի, երբեմն էլ տխուր աչքերով բացառիկ տաղանդի տեր մի երիտասարդ, որը, որպես կրկեսի ծաղրածու և մնջախաղի մեծ վարպետ, պիտի դառնար ապագա սերունդների ուսուցիչն իր չծերացող արվեստով:

«Ծաղրածուների արքա». այսպես են հիշում նրան իր ժամանակակիցները:

1. Ինչո՞վ էր սիրում զբաղվել փոքրիկ Լյոնյան:
2. Ի՞նչ մասնագիտություն ընտրեց Լեոնիդ Ենգիբարյանը:
3. Երբևէ եղե՞լ ես կրկեսում: Պատմի՛ր այդ մասին:
4. Համացանցից հակիրճ տեղեկություններ գտի՛ր Վան Գոգի և Պուշկինի մասին, որոնց շատ էր սիրում Լեոնիդ Ենգիբարյանը:

5. Առարկա ցույց տվող բառերից կազմիր գործողություն ցույց տվող բառեր և գրիր.

նկար-, խաղ-, զանգ-, լող-, գիր-, քուն-:

6. Դիտեք և պատմեք նկարը՝ օգտագործելով հետևյալ բառերը.

հանդիսատես, ելույթ, ծաղրածու, արտիստներ, հիանալ, կենդանիներ, ներկայացնել, բարձրացնել, մագլցել, ողջունել, ծափահարել, ոգևորվել, ծիծաղեցնել:



7. Պատկերացրու կանգնած ես Լեոնիդ Ենգիբարյանի արձանի առջև՝ ինչ կասես նրան, ինչ տեղեկություն կհաղորդես:

8. Հետևելով Լյոնյայի օրինակին՝ ստեղծեք որևէ սեղանի խաղ: Օգտագործեք ձեր ձեռքի տակ եղած նյութերն ու միջոցները:

Տեսահոլովակ կրկեսում

ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ՇԱԽՄԱՏԻՍՏԸ

Ըստ «Շախմատիստի կյանքը» գրքի

Փոքրիկ Տիգրանը սիրում էր հետաքրքրաշարժ խաղեր:

Մի օր Տիգրանի ձեռքն ընկավ շախմատի մասին մի պատկերազարդ գիրք: Նա կարդաց գիրքը, և ամեն ինչ փոխվեց, տարվեց շախմատով. մեկը մյուսի հետևից հաղթում էր փորձառու մրցակիցներին:

Տիգրանը տասնվեց տարեկանում դարձավ պատանիների առաջնության չեմպիոն:

Շատ տարիներ անց Տիգրան Պետրոսյանը դարձավ շախմատի աշխարհի իններորդ չեմպիոնը:

Այդ օրերին, երբ ընթանում էր պայքարը աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար, Հայաստանում մարդիկ ապրում էին շախմատով: Ամեն երեկո հազարավոր մարդիկ, հանգիստը կորցրած, հավաքվում էին զովաշունչ զբոսայգիներում,

ընդարձակ հրապարակներում ու սպասում էին լուրի, թե ինչպես է ընթանում պայքարը, որի գլխավոր հերոսն այդ տարի Տիգրան Պետրոսյանն էր:

1. Ո՞վ էր Տիգրան Պետրոսյանը:
2. Ի՞նչ գիտեք շախմատ խաղի մասին:
3. Սեղանի ի՞նչ խաղեր գիտեք:

4. Օգտվելով տեքստից՝ գտի՛ր առարկա ցույց տվող բառերին համապատասխան հատկանիշ ցույց տվող բառերը.

փոքրիկ	***խաղեր***
հետաքրքրաշարժ	***Տիգրան***
պատկերազարդ	***մարդիկ***
փորձառու	***գիրք***
հազարավոր	***հրապարակներ***
ընդարձակ	***զբոսայգիներ***
զովաշունչ	***մրցակիցներ***

5. Ըստ օրինակի՝ գրի՛ր բառակապակցությունները՝

փոքրիկ *(ինչպիսի՞)* ***Տիգրան*** *(ո՞վ):*

6. Անվանիր շախմատի խաղաքարերը.

7. Գտիր շախմատի որևէ խաղաքար, նկարիր և բնութագրիր այն.

- ինչ դեր ունի «Շախմատային պալատում»,
- ինչ հատկանիշներ ունի,
- ինչ կարող է անել:

8. Ընտրեք շախմատի ցանկացած երկու խաղաքար ու դերերով ներկայացրեք երկխոսություն:

9. Պատրաստեք հաղորդում շախմատի ձևերի մասին.

- գրեք շախմատ խաղալու քայլերը,
- մշակեք պաստառ և ներկայացրեք շախմատային խաղի հրահանգներն ու կանոնները,
- ցուցադրեք շախմատային խաղի որևէ դրվագ,
- գրանցեք խաղի արդյունքներն աղյուսակի միջոցով:

մասնակիցներ	քայլ 1	քայլ 2	քայլ 3	քայլ 4	քայլ 5

- գնահատեք խաղացողի ջանքերը՝ նշելով անձնային այն որակները, որոնք դրսևորվում են շախմատ խաղալիս:

ՄԵԾ ԼՈՌԵՑԻՆ

Հովհաննես Թումանյանը ծնվել է Լոռվա Դսեղ գյուղում:

Մանուկ Հովհաննեսի սիրած վայրը Դսեղում Դիդն էր: Դա մի բլուր էր, բայց փոքրիկ տղային հսկա սար էր թվում: Հաճախ էր բարձրանում բլրի գագաթն ու երազում՝ աստղերին նայելով և երևակայելով, թե ճախրում է բաց, կապույտ երկնքում:

Երեխա ժամանակ Հովհաննեսը շատ լավ «Կոճի» էր խաղում: Կոճին կովի մանրիկ ոսկորներով խաղ էր, որը հայտնի էր նաև «Վեգ» և «Ճան» անուններով: Իսկ ընկերներով շատ էին սիրում հատկապես պահմտոցի խաղալ:

Գյուղում, որտեղ ապրում էր Հովհաննեսը, Նեսո անունով մի տղա կար: Նա շատ հեքիաթներ գիտեր: Ամռան լուսնյակ գիշերներին նրանք հավաքվում էին Հովհաննեսենց տան դիմաց, որ լսեն Նեսոյի պատմությունները, զարմանահրաշ հեքիաթները «հուրի-փերիների», «լույս ու մութ աշխարհների», «զմրուխտ ղուշի» մասին: Երբ մեծացավ, Թումանյանն իր այդ ընկերոջ մասին «Իմ ընկեր Նեսոն» պատմվածքը գրեց:

Երբ լրանում է տղայի տասը տարեկանը, հայրը Հովհաննեսին տանում է Ջալալօղլի՝ այժմյան Ստեփանավան քաղաք՝ դպրոցում սովորելու: Հովհաննեսը սրախոս աշակերտ էր, կայտառ ու ինքնավստահ:

«Երբ մեծանամ, պետք է պոետ դառնամ, որովհետև սիրում

եմ ոտանավորներ գրել»,- ասում էր նա: Վճռական էր Հովհաննեսը, համառ, բայց ոչ հանդուգն: Դեռ փոքրուց նա բարի էր ու մեծ երազող:

1. Ինչ գիտես Հովհաննես Թումանյանի մասին:
2. Ըստ այս պատմության՝ բնութագրիր փոքրիկ Հովհաննեսին:
3. Կարող ես գուշակել, թե ինչի մասին էր երազում Հովհաննեսն աստղերին նայելիս:
4. Ինչով էին զբաղվում Հովհաննեսն ու իր ընկերները գյուղում:
5. Ինչպե՞ս եք շփվում դու և քո ընկերները դասերից դուրս, ազատ ժամանակ:

6. Խառնված տառերը դասավորիր այնպես, որ ստանաս ճիշտ բառերը.

լ յ ս ու ***ե զ ա ր*** ***ա խ շ ա հ ր***

հ ք ի ե թ ա ***գ ու ղ յ***

ո ն ա պ ա ր վ ո

7. Ստացած բառերն օգտագործիր նախադասությունների մեջ:
8. Վանկատիր տրված բառերը՝ նշելով վանկերի քանակը: Օրինակ՝ գագաթ՝ երկու վանկ:

   գագաթ, հսկա, բլուր, աստղ, ոսկոր, լուսնյակ, ինքնավստահ
9. Տեքստից առանձին սյունակներով դուրս գրիր առարկա, գործողություն և հատկանիշ ցույց տվող երեքական բառ:

10. Քննարկեք, թե ինչ խաղեր են հետաքրքրում ձեր հասակակիցներին:

11. Թվարկեք այն բակային խաղերը, որ նախընտրում եք խաղալ ընկերներով:

12. Ներկայացրեք ձեր սիրելի խաղերից որևէ մեկը, որ խաղում եք ձեր ընկերների կամ ընտանիքի անդամների հետ.

- խաղի անունը,
- խաղի կանոնները,
- խաղի ընթացքը:

13. Պատկերացրու՝ հանդիպել ես Հովհաննես Թումանյանին և պետք է նրա հետ հարցազրույց վարես: Կազմիր հարցաշար և ներկայացրու:

14. Գրիր մի փոքրիկ պատմվածք քո մտերիմ ընկերոջ մասին: Նկարազարդիր պատմությունդ և ներկայացրու:

15. Հեռուստատեսությամբ տեղեկացել եք, որ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը՝ փետրվարի տասնինը, նշվում է որպես Գիրք նվիրելու օր:

- Ընտրեք Հովհաննես Թումանյանի ձեր սիրելի ստեղծագործություններից մի քանիսը և ինքնաշեն գրքույկ պատրաստեք.
- նկարազարդեք,
- գրեք գիրքը նվիրելու բարեմաղթանք:

Հիշեք՝ Գիրքը լավագույն նվերն է:

Հեքիաթների խառնաշփոթ

16. Կարդացեք (լսեք) Հովհաննես Թումանյանի «Ճամփորդները», «Կացին ախպեր», «Անխելք մարդը» և «Սուտասանը» հեքիաթները:

Հովհաննես
Թումանյան
ՀԵՔԻԱԹՆԵՐ

17. Կազմեք չորս խումբ.

- յուրաքանչյուր խումբ մշակի սցենար, բաշխի դերերը և բեմադրի հեքիաթներից մեկն իր ընտրած տարբերակով. *դերասաններով, փիկնիկներով, սփվերային, ձեռնոցներով և այլն*:

18. Միավորվեք և հորինեք մի նոր հեքիաթ, որտեղ կլինեն Հովհաննես Թումանյանի հեքիաթների հերոսները:

- Բեմադրեք նոր հեքիաթը:
- Պատրաստեք ներկայացման ազդագիրը՝ հետևելով քայլաշարին:

Գրեք.

- վերնագիրը կենտրոնական մասում,
- դերակատարների անունները, ով ինչ դեր է խաղում,
- անցկացման վայրը,
- ներկայացման սկիզբը, ավարտը,
- ձևավորեք ազդագիրը:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ինչ անվանի մարդկանց հետ ծանոթացար այս թեման ուսումնասիրելիս: Գիտե՞ս՝ որտեղ կան նրանց արձանները: Ո՞ւմ կուզեիր նմանվել:

2. **Խաղ:** Փակի՛ր աչքերդ, պատկերացրո՛ւ քեզ մեկ, հինգ, տասը տարի հետո. ի՞նչ ես տեսնում, ինչպիսի՞ փոփոխություններ են կատարվել քո կյանքում: Բացի՛ր աչքերդ, վերցրո՛ւ երեք թուղթ և յուրաքանչյուրի վրա, հաստ գծերով նկարի՛ր փոքր, միջին և մեծ շրջանակներ: Թղթերն իրար վրա դնելով՝ այն կնմանվի հեռադիտակի տեսանելիության դաշտի պատկերին: Փոքր շրջանակում նկարագրի՛ր քեզ մեկ տարի հետո, միջին շրջանակում՝ հինգ տարի հետո, մեծ շրջանակում՝ տասը տարի հետո:

3. Ինչ մասնագիտությունների մասին տեղեկություններ իմացար: Դրանցից ո՞րն է քեզ ավելի շատ դուր եկել և ինչո՞ւ:

Հիշի՛ր

Բառերը ցույց են տալիս առարկա՝ անձ և իր.

բժիշկ, Դավիթ, մատիտ, խաղալիք:

Բառերը ցույց են տալիս առարկայի հատկանիշ.

գեղեցիկ, փայտե, բարի, ուժեղ:

Բառերը ցույց են տալիս գործողություն.

վազել, սովորել, խաղալ, աշխատել, նկարել:

Առարկա և հատկանիշ, կամ գործողություն և հատկանիշ ցույց տվող բառերն իրար կողք կողքի դնելիս կստացվեն բառակապակցություններ.

նոր խաղալիք, խաղաղ երկինք, ուշադիր լսել,
լավ աշխատել:

ԲԱՌԱՅԱՆԿ

աղջիկ	
աշխարհահռչակ	*նշանավոր, հանրահայտ*
բացառիկ	*արտասովոր*
երևակայել	
ընթանալ	*շարժվել, գնալ*
խեղճ	
խոնարհվել	
հանդուգն	*համարձակ, խիզախ*
հաղթել	
հապճեպ	*շտապ, արագ*
հարևան	
հետնաբեմ	*բեմի խորքային մաս*
հեքիաթագիր	
մնջախաղ	*բեմական արվեստի տեսակ, որտեղ դերակատարները դերը կատարում են դիմախաղի ու ժեստի միջոցով*
յուրահատուկ	*իրեն հատուկ, առանձնահատուկ*
ոսկոր	
պոետ	*բանաստեղծ*
սրբել	
տիտղոս	*կոչում*
փորձառու	*հմուտ, վարժ*
ֆիլհարմոնիա	*երաժշտական արվեստի ու համերգների կազմակերպումով զբաղվող ընկերություն*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բարև՛, ես եմ 4

Ծիածան, *Ե. Պետրոսյան* 4

Մի օրով էլ մեծացա, *Պ. Խաչատրյան* 8

Ես, *Խնկո-Ապեր* 11

Շաբաթվա իմ յոթ օրերը, *Ա. Ահմադի* 14

Շնորհակալությունը, Ներեցեքը, Խնդրեմը, *Դ. Բիսեթ* 18

Հարցերի պարը, *Դ. Չերսիսյան* 22

ԱՄՓՈՓՈՒՄ 25

ԲԱՌԱՑԱՆԿ 26

Ես կարող եմ 27

Արագիլն ու սագը, *մշակումը՝ Հ. Մկրտչյանի* 27

Կանաչ գորտի հեքիաթը, *Վ. Գրիգորյան* 30

Համառ մրջյունը, *Վ. Սուխոմլինսկի* 34

Փիղն ու մրջյունները, *Տ. Մարտուչի* 38

Մոռացված ծննդյան օրը, *Դ. Բիսեթ* 41

Տատիկի ժամացույցը, *Գ. Զաքաևա* 46

ԱՄՓՈՓՈՒՄ 51

ԲԱՌԱՑԱՆԿ 52

Երբ նա փոքր էր 53

Մեծ երևակայողը *(www.krtaditak.am)* 53

Կախարդված հանդիսատեսը *(www.krtaditak.am)* 57

Ծաղրածուների արքան *(www.krtaditak.am)* 63

Աշխարհահռչակ շախմատիստը *(www.krtaditak.am)* 67

Մեծ լոռեցին *(www.krtaditak.am)* 70

ԱՄՓՈՓՈՒՄ 76

ԲԱՌԱՑԱՆԿ 77

Անահիտ Պետրոսի Արնաուդյան
Մարինե Ռաֆիկի Մանուկյան

ՄԱՅՐԵՆԻ

2

Ի ՄԱՍ

Երաշխավորված է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից

Նկարիչ՝
Նաիրա Ահարոնյան
Սրբագրիչ՝
Մարգարիտ Արիստակեսյան
Համակարգային ձևավորումը՝
Ալվարդ Օհանջանյանի

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am